Հայտարարվում է մրցույթ ՀՀ Արմավիրի մարզի Արաքս համայնքի Հայկաշեն գյուղի «Հայկաշենի մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի մեկ դաստիարակի (0,56դրույք), մեթոդիստ ուսումնական գծով՝ տնօրենի տեղակալ (0.25դրույք) թափուր պաշտոնները համալրելու համար :

Վերոհիշյալ պաշտոնների համար նախատեսված վարձատրությունը որոշվում է ըստ հիմնադրի դրույքաչափի:

Մրցույթի մասնակիցների գիտելիքների և մասնագիտական կարողությունների ստուգումն անցկացվելու է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի՝ ըստ ՀՀ ԿԳՄՍ նախարարի կողմից հաստատված հարցաշարերի:

Մրցույթին մասնակցելու համար անձը պատասխանատու աշխատակցին պետք է ներկայացնի՝

1. դիմում (Ձև 1)
2. կրթության մասին փաստաթուղթ՝դիպլոմ
3. անձը հաստատող փաստաթուղթ
4. աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք կամ աշխատանքային գրքույկ
5. ինքնակենսագրություն՝Ձև 4
6. լուսանկար 3x4չափի
7. այլ պետության քաղաքացիները՝ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ
8. ՀՀ արական սեռի ներկայացուցիչները ներկայացնում են զինվորական գրքույկ,կամ զինվորական կցագրման վկայական:
9. հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչում հավաստող փաստաթղթեր(առկայության դեպքում)
10. որակավորման տարակարգ(առկայության դեպքում)

Փաստաթղթերի պատճենները անհրաժեշտ է ներկայացնել բնօրինակների հետ:

Փաստաթղթերը ընդունվում են սույն հայտարարության հրապարակման օրվանից մինչև հուլիսի 4–ը ներառյալ՝ամեն օր ժամը 10:00ից 15:30, բացի ոչ աշխատանքային օրերից:

Մրցույթի անցկացման օրը՝09.07.2025 ժամը՝12:00-ին տեղը՝գ. Հայկաշեն « Հայկաշենի մանկապարտեզ» ՀՈԱԿ, 9փ 28տ , հեռ +37494800675